

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմը 10 րուր, կէս տարվանը 6 րուր:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանագրատուն մէջ:

Ոտարարագրողները դիմում են ուղղակի

Тифлисе. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լոյսով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրատանջիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի հասգիտա-
կան ժողով: Նամակ Բուխարին: Նամակ Մոզ-
զոկին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. «Journal d'Orient» լրագրի յօդուած:
Գերմանիա: Ամերիկա: Իտալիա: Նամակ Գերմա-
նիային: ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ: ՖԵԼԵՏՈՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Երկուշաբթի օր, սեպտեմբերի 21-ին ա-
ռաւօտեան, Թիֆլիսի հասգիտական ժողովը
իր վերջին նիստն ունեցաւ, ժողովի փակ-
վելուց առաջ: Այդ նիստի մէջ գեներալ
Կոմարով մի շատ հետաքրքիր եւ երկար
լեզբերաւ կարգաց Գերմանիայի պարսպի
պատմական նշանակութեան մասին: Դրա-
նից յետոյ պ. Երիցեան կարգաց պ. Ավդէե-
վի ընթերցաւ հայոց եւ վրաց եկեղեցական
ճարտարագիտութեան մասին:

Այդ ընթերցումից յետոյ կանգնեց ամբիո-
նի վրա պ. Միքէլաճէ, Թիֆլիսի կլասիկա-
կան գիմնազիայի պատմութեան ուսուցիչ,
եւ հաղորդեց պ. Բաքրաճէի հետազոտու-
թիւնների մասին նոր նուաճած երկիրնե-
րում, մանաւանդ Արդահանի վիճակում:
Նա ցոյց տուեց մի քանի նկարներ, որոնք
կատարված էին նկարիչ պ. Բերիճէից: Պ.
Բաքրաճէ գտաւ Արդահանի գաւառում մի
քանի հնութիւններ՝ եկեղեցիներ, արձան-
ներ եւ բերդեր, որոնց վրա գտնվեցան վրաց
արձանագրութիւններ: Պ. Միքէլաճէ ըսկզ-
բից շատ համեստ կերպով յայտնեց, որ իր
գեղեցումը անում է ոչ թէ որպէս գիտ-
նական, այլ միայն մի քանի անկապ տեղե-
կութիւններ է կամենում հաղորդել: Բայց

իր գեղեցումն վերջը չը կարողացաւ պահ-
պանվել իր համեստ դերի մէջ եւ յանկարծ,
այդ անկապ տեղեկութիւններից դուրս բե-
րեց մի հաստատ, որոշ պատմական եզրա-
կացութիւն: «Այդ բոլոր վրաց արձանա-
գրութիւնները, ասեց պարոնը, կատարելա-
պէս ոչնչացնում են այն պլանդակ (план)»
կարծիքը, թէ Ղարսի նահանգը որ եւ է
ժամանակ հայաստան է եղել, այլ նա ե-
ղել է հին վրաստան:»

Պ. Միքէլաճէին պատասխանեց պ. Երի-
ցեան շատ խելացի կերպով: Նա ասեց որ
ոչինչ չէր պատասխանի պ. Միքէլաճէին, եւ
թէ սա բաւականաւար, ինչպէս ինքն է
յայտնել, համեստ գեղեցումով, բայց երբ
նա սկսեց համարձակ պատմական եզ-
րակացութիւններ դուրս բերել կցիտուր ի-
րողութիւններից, նա ստիպված է պատաս-
խանել: Պ. Երիցեան ցոյց տուեց որ Ղարսի
նահանգը, սարօտ երկիր լինելով, ամենահին
ժամանակներից եղել է պատասպարվու տեղ
թէ վրացի, թէ հայ գաղթականների հա-
մար, այդ երկիրը, կամ նրա այս եւ այն մա-
սը հերթով անցնում էին հայերի եւ վրա-
ցիների ձեռքը: Բացի սորանից պարոնը շատ
իրաւացի կերպով նկատեց թէ արձանագրու-
թիւններից չէ կարելի եզրակացնել մի որ
եւ է արձանի կառուցման ժամանակի մա-
սին. շատ անգամ արձանը շինված է, գի-
ցուք իննորորդ դարում, իսկ նրա վրա ե-
ղած գրութիւնները պատկանում են, դիցուք,
տասն եւ երկրորդ դարին եւ այլն: Պ. Երի-
ցեան օրինակներ բերեց, մատնացոյց անելով
այս կամ այն հնութեան վրա. մի հայոց
եկեղեցի, որի ճարտարագիտութիւնից, խո-
րանի ձեւից եւ այլն, երևում է թէ նա
հայոց եկեղեցի էր, կրում է իր վրա վրաց
արձանագրութիւններ: Ուրեմն մի հնու-

թիւն որոշել կարելի է միայն նրա ճար-
տարագիտութեան ձեւից եւ ոչ թէ նրա
արձանագրութիւնից, որ կարող է ժամանա-
կակից լինել, կարող է եւ աւելի ուշ փորա-
գրված լինել:

Այդտեղ մենք մեր կողմից պ. Երիցեանի
ասածին կաւեցանք հետեւալը: Երբ
պէտք է հաւաքվէր մեր քաղաքում հնա-
գիտական ժողովը, մենք հասարակ մահա-
նացունենք մեծ յարգանքով սպասում էինք
Երեւելի գիտնականների խօսքերը ամբիոնից
լսելու, այնպիսի գիտնականների, ինչպէս
կոմս Ուլաբով, կաստամարով, Վիրբով,
Խոլոսով, Էմին, Պատկանեան, Իսովայսկի,
Կոմարով եւ այլն: Մենք չէինք կարծում որ
կարող ենք յանդգնել նոյնպէս բարձրակա-
մարտի վրա եւ պ. Միքէլաճէի պէս խակ
մտքեր յայտնել ամբիոնի բարձրութիւնից:
Եթէ պարոնի պէս անձինք կարող են խո-
սել ամբիոնից եւ չը բաւականաւարով ըն-
թերցաւ, իրանց համարձակ գիտնա-
կան եզրակացութիւններն էլ դուրս բերել
մի քանի անկապ իրողութիւններից, ինչի
մենք էլ իրաւունք չունենանք գոնէ մեր
միտքը յայտնել լրագրի մէջ:

Եթէ մենք արձանագրութիւններից, ու-
րոնք գտնվում են արձանների վրա պէտք
է որոշէինք արձանի շինութեան ժամանա-
կը, ինչ կասէր պ. Միքէլաճէ հետեւալ
իրողութիւնների վրա: Գիտ գիմնազիստ
ժամանակ մենք այցելեցինք Մանգլիսի
հոյակապ վրաց եկեղեցին եւ տեսանք նրա
պատերի վրա հին վրաց, խուցուրի ա-
նուանված տառերով արձանագրութիւններ:
Գերմանիայից վերադառնալուց յետոյ մենք
կրկին այցելեցինք Մանգլիս եւ տեսանք
թէ շատ տեղերում վրաց հին տաճարի
վրա երևում էին այժմ ուսուց արձա-

նագրութիւններ: Այնու ամենայնիւ ոչ
ոք չի վերաբերի վրաց հին տաճարի
շինութիւնը նոր ժամանակների: Ուրիշ
օրինակ. Ղարսի հին հայոց եկեղեցինե-
րից մինը, որի շինութիւնը յայտնի է
հայոց պատմութիւնից, Թիւրքերի տիրա-
պետութեան ժամանակ եղել է մահմետական
մզկիթ, իսկ այժմ Ղարսի հայ հասարա-
կութիւնը կամեաւոր կերպով զիջել է այդ
եկեղեցին ուսումներին եւ նա դառել է ուս-
ողորդական տաճար: Եթէ այդ տաճարի վրա
երեւոյին նախ արաբական արձանագրութիւն-
ներ, յետոյ սլավոնական, գիտութիւնը մի-
թէ այդ արձանագրութիւններից կը որո-
շէր եկեղեցու շինութեան ժամանակը, եւ
ոչ թէ նրա արխիտեկտուրայից: Կարձեալ
մի օրինակ. Անիի պարսպների վրա երևում
են եւ հայոց եւ արաբական եւ Թիւրքաց գը-
րութիւններ: Եթէ ժամանակով հայոց ար-
ձանագրութիւն կրող քարը ջնջվէր կամ
ընկնէր, անհետանար եւ պարսպի վրա
մնար միայն արաբական գրութիւն, պ.
Միքէլաճէ երեւի կը վերաբերէր այդ ար-
ձանը արաբներին:

Վերջապէս կարող էր պատահել որ պ.
Երիցեանի ցոյց տուած արձանները ծըշ-
մարտ վրաց արձաններ էին. այդ միայն
ցոյց կը տայ որ հայերը եւ վրացիները Ար-
դահանի վիճակում միասին էին բնակվում,
ինչպէս Կովկասեան երկրի ուրիշ շատ տե-
ղերում: Բայց այդ իրողութիւնից դուրս բե-
րել պատմական հաստատ իրողութիւն, թէ
ում պատկանում էր երկիրը, չափից դուրս
համարձակ է:

Պ. Երիցեան շատ գեղեցիկ կերպով վեր-
ջացրեց իր պատասխանը պ. Միքէլաճէին:
«Իրողութիւններից պատմական որոշ եզրա-
կութիւններ դուրս բերել, ասեց նա, որ-

ՖԵԼԵՏՈՆ

Նախկին ֆելետոնիստ մէջ իմաց արած էի աղ-
գային դործերով պարագուրիս, այս զբաղմանց
պատճառաւ ֆելետոնիստ կամ թերթիստ մէջ
(Մասիսի շինած բառն է) մի քանի բան մոռա-
ցել էի, ներկայիս կը փութամ պակասը լրաց-
նել:

Կ. Պոլսոյ պատրիարքական սնդուկին մէջ փող
չէ մնացել. «Մշակի» մէջ Հայկազի նամակից ի-
մացանք որ ս. պատրիարքը 30 սուկի լիցեցրել է
իր ամսականը, եւ երկար ժամանակէ ի վեր ամ-
սական չը ստացող պաշտօնեայնները հետզհետէ
հրաժարական տալիս են եղել, վերջապէս փարայ
չը կայ եղեր, մինչեւ անգամ ս. պատրիարքի ան-
հրաժեշտ այցելութեանց համար Փայտօնի փող
չէ պակասում է, ասած էր Վոլոյս լրագրիւր, որուն
համար «Մասիս» էլ ակնարկած էր թէ այս տե-
սակ լուր հրատարակելը անտեղի եւ անվայել է:
Ըստիս ս. պատրիարքը եթէ ոտքով գետպաննե-
րին այցելութեան գնաց, որքան վայելուչ կը լի-
նի չը գիտնուի: Կ. Պոլսոյ հայ ազգի հարուստնե-
րը ոչ թէ մի հատ, այլ մի քանի կառք կարող
են յատկացնել ս. պատրիարքի պիտոյիցը համար,
բայց ոչ գիտն, կարելի է սպասում են Մոսկովայի
հայերին որ նոքա ուղարկեն մի ֆայետոն եւ եր-
կու ձիեր: Զարմանալի է մեր հայերի ընթացքը.
անձնուրաց մի մարդ որքանի զոհարելութիւն ա-
նէ ազգին, նրան կեցցէ՞մ կը վարձատրեն, մի-
նչ

չն անգամ կեանքը գոնէ եւ մեռնի, դարձեալ
կեցցէ կը պօսան, չեն իմանում թէ կառք եւ
ձիս եւ ձիուն ուտելիք յարդը փողով է, ձիս կեց-
ցէ չի ուտեր:

«Մշակի» վերջին դրամական նպաստը Վիէն-
նայի «Ճուրնալ դ'Օրիան» լրագրի խմբագրին
փոքր ինչ շունչ պարգեցեց, խեղճ մարդը խելո-
վում էր Կ. Պոլսից եկած շնորհակալութեան նա-
մակներից, որոնք լինէին խրատոյս, քաջաւի-
րութիւն, հաւատք, յոյս, սէր եւ այլն բառերով
առանց մի կօպէկ պարտականելու, յայտնի բան է
տպարանին տէրը այս օրհնութեան թղթերով լը-
րագրի համարները չէր կարող ապել, սոյն առ-
թիւ տեղի ունեցած հետեւալ խօսակցութիւննե-
րը յիշելու պէտքը զգացի:

(Թիֆլիսում):

— Խոսմ լսեցիր, Վիէննայում ֆլորանսուգրէն
մի կաղէտ դուրս է եկել, հայերին շատ է սի-
րում, լաւ բաներ է գրում, հիմի մեզանից փող
են ուղարկ, ես ֆրանսուգրէն չը գիտեմ. ափսոս
չէ, վրացերէն լինել կու կարգայինք:

— Ուրեմն, այդ լրագրի հայերին սիրելը չէ
նշանակում որ նա հայերին սէր յայտնելու եւ սե աչ-
քերին է դմայած, երկրորդ Վիէննայում վրացե-
րէն խմբող չը կայ, այդ հարցական թերթը
հայոց հարցը ձրի չէ կարող պաշտպանել, դու
կարգացել ես, չես կարողացել, հոգ չէ, միայն
քեզանից խնդրած փողը վճարէ:

— Ի՞նչ կուրի, դա կաղէտը «Մշակը» վրացե-
րէն պէտքի՞ւր անի, մենք էլ կու իմանայինք է-
լի. դու վրացերէն չես իմանում:
— Ես վրացերէն չը գիտեմ, ինձ հարկաւոր չէ,

«Մշակը» արդէն իր համարներուն մէջ հայկա-
կան լեզուի թարգմանում է ֆրանսերէն թերթի
յօդուածները, կարող ես կարգաւ:

— Ես փոքր իմանում հայկերի լեզուն, ինձ համար
ֆրանսուգրի լեզուն էլ, հայի լեզուն էլ զիտի մէկ
է, չեմ իմանում էլի վն:

(Կ. Պոլսում)

— Տուր ինձ քու ձեռքը, բարեկամ, կը փո-
թամ քեզ նոր աւետիս տալ, ահա հասաւ մեզ
այն երջանիկ, այն փափաքելի օրը, օր փրկու-
թեան թշուառ, տառապեալ, եւ խղճալի հայ ազ-
գիս, ո՞հ երկինք, ինչ բարեբախտութիւն, ո՞վ Աս-
տուած իմ, ինչ երջանակութիւն, ահա հրեշտակ
ոսկեփետուր թռուցեալ բարձուստ երկնածեմ,
հայոց բախտին հեծեալ ի կռուս, բարձր գոյէ
զուարթագէ՞մ...

— Եղբայր խեղճեցար, ինչ եղար, ինչ կըլլա-
կոր:

— Ո՛հ, թող զիտ, մի ընդմիջեր զիտ, թող բա-
նաստեղծական կրակն իմ արժարժեղով արծար-
ձեցել, եւ բորբոքելով բորբոքեցի եւ...

— Աստուած խեղճ տայ, քիչ մը ջուր խմէ, չը
բռնկիս, ինչ կայ, ինչ պատահեաւ:

— Ո՞վ ձակատաղիր, հայկական հարցը պաշտ-
պանող organ մը ունինք այժմ Վիէննայի մէջ,
այո՛ւ, զի ի ցնծութիւն եւ ի խնդութիւն:

— Խեղճութիւն պէտք չէ, դա նոր բան չէ, ես
բաժանորդ գրուեցայ, տարեկան 20 ֆրանկ է,
դու ալ գրուեցար անշուշտ:

— Տակաւին ո՞չ, սակայն ոչ թէ միայն բաժա-
նորդ գրուել, այլ եւ կեանքս, արեւնս, հոգեւնս

զոհելու պատրաստ էի եթէ մեր հարցին պաշտ-
պան հանդիսանար Վլաքթոր Հիւլօն, կեցցէ Հիւ-
լօ, կեցցէ սահմանագրութիւն...

(Վիէննայում)

— Բարե ձեզ. պ. խ.

— Կուր մօրկըն, ի՞նչ բիտե...

— Հայ եմ եղբայր, գերմաներէն խօսելու հար-
կաւորութիւն չը կայ:

— Ի՞նչ կուղէք, ուրկէց կուգաք:

— Եղբայր, իբրեւ ազգակից ձեզ դիմեցի այս-
տեղ ֆրանսերէն մի լրագրի կայ, հայկական
հարցը պիտի պաշտպանէ եթէ մի քանի հարիւր
բաժանորդ ունենայ, տարեկան գինն է 8 ֆի-
րին...

— Ի՞նչ կըսես կոր պէ, Վիէննային մէջը քա-
նի մը հարիւր հայ ըլլալը ո՞վ ըսաւ քեզի, բի-
թիւն աշխարհին վրա պիլէ անխրտար հայ չը
մնաց:

— Ո՛հ, ո՞չ, դուք սխալ մի դատեք, գոնէ վե-
ցամանայ բաժանորդագիրն 4 ֆիօրլին վճարե-
ցեք, այս նիւն գումարը յօդուած ազգին ոչինչ
նշանակութիւն չունի ձեզ համար:

— Ի՞նչ ըսել է պէ արարար, 4 ֆիօրլինը 400 քը-
ռայցար ըսել է, հէ՛մ աֆ կընես, ես քեզի մէկ
լախըրաք մը գուրցեմ, նաֆիլէ պօշ բան է,
մինչեւ հիմայ հայերը ինչ եղեր են քի սակեց
սօրա ինչ պիտի ըլլան, անանկ թուելը մը պօշ-
պօղազներուն լախըրաքներուն անկած մի կա-
խէք:

տեղ էր հին Հայաստանի և հին Վրաստանի ձիւղ սահմանը,—այդ պատկանում է գիտութեանը, և այդ մասին եզրակացութիւն դուրս բերելը վայել չէ ոչ ինձ, ոչ էլ ձեզ, պ. Միքէլաճէ: Այդ թողնենք գիտութեանը:՝

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Սեպտեմբերի 15-ին

Վերջապէս Բուխարսն էլ բաղդ ունեցաւ տեսնելու ամսին 13-ին երեկոյեան ժամ 8-ին Հնազանդական ժողովի բաղմանքի մարդկային ազգի նշխարները և բեկորները սիրող անդամները: Այդ երեկոյ Բուխարսի երկաթուղու կայարանը լիքն էր խուռն բաղմանքով, որտեղ երեւում էր ամեն տեսակ չրջանի արանց և կանանց մեծ բազմութիւն: Իջնանը լուսաւորված էր ճրագներով, ածում էին զինուորական երաժշտական երեք խումբ: Երեկոյն քաղցր և գեղեցիկ էր՝ կարծես թէ ճնութիւնն էլ մեզ հետ ուրախ և մտածման մէջ էր: Գիտնականների վագոններից ելնելուն պէս անվերջանալի ռուբաներն էին զորդու լողորների ականջները: Քաղաքային կարգադրութեամբ բոլոր զինուորական հիւրերը իջնանիցին դանաղան հիւրասէր անձանց տները: Միւս օրը առաւօտեան քաղաքի փողոցներում ուրախ աղուկներ էին լսվում և քաղաքը մեծ շարժողութեան մէջ էր: Ինչքան քաղաքում էր այդ օրը քաղաքը, որ վաղ առաւօտեան տեսնում էր Եւրոպայի դանաղան քաղաքներից եկած պրոֆեսորներին:

Նոյն օրը, առաւօտեան ժամի 10-ին, ամբողջ ուսումնական խումբը, ուղեկցութեամբ տեղական բարձր ծառայողաց և միւս չրջանների անձանց կառքերով և ձիաներով արշաւելով գնում էին դէպի Գեղարթի վանքը: Աւելորդ չեմ համարում ծանօթացնել համառօտ կերպիւ ընթերցողներին վրաց հաշակաւոր վանքի հետ Գեղարթի մի փոքրիկ դիւղ է և յանուն նրա վանքն էլ անուանվում է Գեղարթի վանք: Ինքը գտնվում է Գուրթայից դէպի արևելք 8 վերստ հեռավորութիւն և յիշված է մի լեռան վրա, նրա չորս կողմը բացվում է անտառոտ հիւսնալի տեսարան: Վանքը շինած է 11-րդ դարում, վրաց Գաւթի թագաւորի օրով (մականաւանալ Գաւթի Շինող): Նրա մեծութիւնն է Մցխեթի վանքի չափը, կառուցված է սրբատաշ քարերով և համարեա թէ նոյն ճաշակով: Ինչպէս Մցխեթին: Մեծ. պ. պ. պրոֆեսորները ամբողջ 4 ժամ ուշադրութեամբ քննարկում էին ամենայն ինչ, և ինքս լըսում էի նրանց հետաքրքրութեան զգալի բաւականութիւնը: Վանքում կային շատ մարդարտեայ, ոսկէ, արծաթէ և հաղուագիւտ անկերով զարդարված եկեղեցու հին սպասներ: Վանքի դանձերի հարստութիւնը, ինչպէս լսեցի, միլիոններ է հասնում: Այնտեղից՝ նոյն երեկոյեան ժամի 4-ին գնացին Մոծամիթա անուանեալ վրաց վանքը, որը մօտիկ է Գեղարթին, բայց այնտեղ ոչինչ բաւականութիւն չը ստացան: Մի և նոյն ժամին վերադարձան քաղաքը կառքերով և ձիաներով: Եւ այդ օրը նշանաւոր եղաւ իմէթիթի վանքերի համար, որտեղ տեսնվում էր երկու սեւի անդամներից բաղկացած ուսումնական մի խումբ: Միւս օրը առաւօտեան բարձրացան քաղաքի մօտիկ սարը, որտեղ կառուցված է վրաց սեմինարիա առաջնորդարանի հետ: Այդ սարի վրա կայ խորհուրդ պատերով մի մեծ վանք, որտեղ գտել են նորերումս, ինչպէս ասում են, գետնի մէջ կարասիով թաղված հինաւորաց գանձ: Կէսօրին բոլոր զինուորականները բաժանվեցան իմէթիթի հին քաղաքից և ուղեւորվեցան դէպի Թիֆլիս՝ բաւականութեամբ և ուրախ սրտով:

Գուրթայի հայ հասարակութիւնը անհանգստութեամբ սպասում էր մեծ. պ. պ. հայագէտ պրոֆեսորներին, այն է՝ պ. Էմինին և պ. Պատկանեանին: Հայր Եւրաբեանը պատրաստել էր մի տուն գեղեցիկ զարդարված հայ պրոֆեսորների համար, այն ինչ հաւաքված հայ հասարակութիւնը խմանալով պ. Երեկոյեանի յայտարարութիւնից որ պ. պ. պրոֆեսորները տկար են և այս պատճառով չեկան: շատ ցաւեցան որ նրանք տեսնութեանը չարժանացան և զրկվեցան այն մխիթարութիւնից, որին սպասում էին իրանց արիւնակից պրոֆեսորներից: Յիշեալ տու-

նը լուսաւորված էր գոյն-զգոյն լապտերներով և ճրագներով: Եւ այս փողոցի երկու կողմը լիքն էր հայ կանանցով և մանուկներով: Քուրթայի հայ հասարակութիւնը ի բոլոր սրտէ բարեմախթում է առողջութիւն և երջանիկ օրեր մեծանուն պ. պ. հայ պրոֆեսորներին: Աւելացնում եմ նաեւ վրա, որ մի քանիսը ներկայ հնազանդական ժողովի անդամներից բարեհաճեցին այցելել տեղական հայոց ծխական ուսումնարանը և ուրախ դէմքով հարցեր էին առաջարկում թարգմանչի միջնորդութեամբ աշակերտուհեաց: Կէս ժամ մնալուց յետոյ՝ դուրս եկան ուրախ սրտով գիտութեան այս աղբաթիկ տաճարից:

Յ. Ամիրզեան

ՆԱՄԱԿ ՄՈԶԻՕԿԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Ձեր պատուական լրագրի վերջին համարներում երևացին մի քանի լուրեր Մոզգոկից հաղորդած. մեծ ուրախութիւն էր մեզ համար տեսնել, որ մեր հասարակական գործերը այսքան երկար ժամանակ ընդհանրութեան համար անյայտ մնալուց յետ, վերջապէս լոյս աշխարհ էին երեւում: Սակայն, այդ ուրախութիւնը տեղի տուեց տխրութեան, տեսնելով, որ հաղորդած լուրերը, ամենաքիչ բացառութեամբ, համարեա բոլորն են անձիւղ ու աղաւաղված էին: Մի կողմ թողնելով միւս լուրերը, որոնց անձեղութիւնը կարծեւ եղած ժամանակ չենք զլանալ մի առ մի ցոյց տալ, ևս ցանկանում եմ այժմ մտնեալուց լինել «Մշակի» № 162 Մոզգոկից հաղորդած լրի վրա: Ահա այն լուրը: «Մոզգոկից մեզ գրում են: Պետրոս Գանջուկեան մի շքեղ օրհորդական դպրոց է կառուցանում Մոզգոկում և մօտ օրերս պարտն մեր երկսեռ դպրոցին 10 հազար ռուբլի նուիրել: Անդաւակ լինելու պատճառով իր մասին չից յետոյ բոլոր կայքը խոտաւում է կապել հայոց երկսեռ դպրոցին: Պ. Գանջուկեան ունի երկու մեծ մագաղաններ, և երկարականի երկու մեծ գեղեցիկ աներ: Ասում են այդ կայքից տարեկան եկամուտը հասնում է 50 հազար ռուբլի: Գանջուկեան Գալոցներում պէտք է դասաւորութիւն անեն համալսարանական ուսուցիչներ, մեծ ունիւթով: Դասաւորութիւնը պէտք է լինի հայերէն լեզուով: Տղայաց դպրոցը կը կրէ իր անունը, Պետրոսեան դպրոց, իսկ օրհորդականը իր անունու անունը, Նուրեհեան դպրոց:» Եւ մարտի է պ. Պետրոս և նորա կողակից յարգելի տիկին Նուրեհեան Գանջուկեանցիներ կառուցանում են մի շքեղ օրհորդաց դպրոց, որի մասին մեր լրագրիցները մէջ իր ժամանակին գրվեցաւ, բայց թէ վերոյիշեալ յարգելի բարերարները, որպէս հաղորդում է «Մշակի» անյայտ լրատուն, մեր երկսեռ դպրոցներին 10 հազար ռուբլի են նուիրել: Խոտաւեցել են իրանց մասին յետ իրանց բոլոր դպրոց նուիրել երկսեռ դպրոցներին, թէ նրանց երկու երկարականի շինութիւնները տարեկան 50 հազար ռուբլի արդիւնք են տալիս, թէ երեկոյեան դպրոցներում հայոց լեզուով դասաւորութիւն պէտք է անեն համալսարանական ուսուցիչներ, թէ տղայաց դպրոցը կը կրէ Պետրոսեան, իսկ օրհորդականը Նուրեհեան դպրոց անունները, գրվում են սուտ է: Թող պ. Լըբատուն ասէ, արդեօք Մոզգոկում 50 հազար ռուբլի արժողութեամբ գտնեա մի շինութիւն կայ, ուր մնաց որ 50 հազար ռուբլի տարեկան արդիւնք բերով շինութիւն լինի: Զէմարտ է պ. Գանջուկեանցի ունի երկու երկարականի շինութիւններ, որոնցից միում զետեղված է փօստատունը, որից, ինչպէս ինքն ասաց, ստանում է տարեկան 500 ռուբլի, իսկ միւս շինութիւնը դեռ ևս նոր է շինվում և չէ աւարտած:

Մեզ համար բոլորովին անհասկանալի է պ. լրատուի զիտաւորութիւնը, թէ արդեօք այդքան հրէշաւոր ստեր հաղորդելով ինչ ծառայութիւն է կամենում մատուցանել: Արդեօք, դրանով պարտն կամեցել է մեր օրհորդաց դպրոցի յարգելի հիմնադիրներին մէջ այն միտքն արժարել, որ նրանք 17,500 ռուբլի օրդ. դպրոցի շինութեան վրա ծախսելուց յետ ժամանակով լրատուի ասածներն ևս յանձնառու լինեն անելու: Բայց դուցէ դրանով պարտն կամեցել է նաև ծաղրել նրանց: Եթէ պատշինն է լրատուի զիտաւորութիւնը, շատ անհեռաւորութեամբ է սկսված, իսկ եթէ երկրորդը, շատ անվայել կերպով, նա մանաւանդ հասարակական կարծիքի թարգման

լինել ցանկացողի կողմից: Պարոն լրատու, ինչու դուք խմբագրութեան դէպի ձեզ ունեցած հաւատարմութիւնը ի չարն էք դրո՞ւմ դնում, ինչու դուք չէք մտածում, որ եթէ ձեզ հաւատում են որպէս մի ազնիւ մարդու, պէտք է ինքներդ ևս ամենայն բանով ապացուցանէք խմբագրութեան դէպի ձեզ ունեցած այդ մեծ համարմունքը: Ի՞նչ միջոցով կարող է խմանալ խմբագրութիւնը, որ ձեր հաղորդած լուրերը, շատ քիչ բացառութեամբ, երեկոյեան ևս ուսում են: Եւ այսպիսի դէպքում, մեր կարծիքով, խմբագրութիւնը բոլորովին անպարտ է:

Ս. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Վահագնի կողմից հնազանդական ժողովին պատգամաւոր ուղարկված հայր Խորէն Ստեփանէն սեպտեմբերի 21-ին, երկուշաբթի օր, Փոխարքայի պալատում մի համակրելի ճառով բացատրեց թէ երկրորդ դարից սկսած մինչև տասն և մէկերորդ դարը լուսաւորութիւնը կամ ուսումը ինչ կերպով է տարածվել Հայաստանի մէջ: Այդ ընթերցումը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ հնազանդականներից:

Սեպտեմբերի 21-ին երեկոյեան եղաւ Թիֆլիսի հնազանդական ժողովի նիստերի փառաւոր: Փառաւոր ժամանակ ժողովի բոլոր անդամները ստորագրում էին Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայեւիչին շնորհակալութեան մի ուղերձ: Երբ բոլոր պաշտօնական գեղեցուցումները վերջացան, մի տիկին վեր կացաւ. տեղից և առաջարկեց որ հնազանդական ժողովը աշխատէ բարձր կառավարութեան առաջ Թիֆլիսում համալսարան հիմնելու համար, որ ամենալաւ միջոց կը լինի կենսորոնացնել գիտութիւնը մեր երկրի մէջ և հետագոտեւ երկրի հնազանդական կեանքի: Տիկինը առաջարկութիւնը մտցնվեցաւ ժողովի օրագրիցներին մէջ և տիկինը ստացաւ մեծ ծախահարութիւններ:

Երկուշաբթի, 21-ին սեպտեմբերի, վրաց թատրոնական խումբը մի ներկայացում տուեց ի պատիւ հնազանդական ժողովի: Պալմի թատրոնը իր բաղմութեամբ: Շատ լաւ տպաւորութիւն արաւ հանդիսականների վրա իշխան Գ. Երեստովից կարգաւորած ուսուցիչներ բանաստեղծութիւններ, որով նա ողջւում էր հնազանդական ժողովի անդամներին Վրաստանի կողմից:

Այս օրերս պրոֆեսոր Վերիսով այցելեց Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը և չափուներ արաւ ուսումնային աշակերտների զաւգալներին, քանի որ հայերի զաւգալներին չափուներ պրոֆեսորը դրանից առաջ բաւական թուով արած էր արդէն:

Մեզ գրում են Լօռուցի, չինչպէս լսում ենք արդէն հաստատվել է երկաթուղու պրոեկտ Լօռու Զօրագետ անուանված գետի ափով դէպի Երևան: Այս տարի Լօռին շատ առատ է ցորեն: Բայց վերջին չորսըները չորութիւն է աւելում և անձին ամենին չէ զգալի: Գիւղացիները այդ պատճառով նորից ցանք չեն անում:

Ուղեւորացի գիւղում տիրում է այժմ փոքրահարիւր ասված ցաւը, որ շատ զոհեր է տանում: Հրաւիրում ենք Լօռու տեղական վարչութեան այդ ցաւի տարածման առաջն առնելու, առողջապահական միջոցներով:

«Тифл. Общ. А.» լրագրին Վաղդիկավկայից հաղորդում են որ այդ քաղաքում գիտաւորութիւն կայ հիմնել մի ընկերութիւն օսերի մէջ լուսաւորութիւն տարածելու նպատակով:

«Кавказ» լրագրից հաղորդում է, որ սեպտեմբերի 20-ին Փոխարքայի պալատում մի մեծ

ճաշկերոյթ տրվեցաւ ի պատիւ հնազանդական հինգերորդ ժողովի: Այդ ճաշկերոյթին մասնակցեցին թէ տեղական բարձր պաշտօնականներ, թէ գիտնական հիւրերը: Հաշի ժամանակ հիւրերն ընդունում էր, որպէս տանտէր, Փոխարքայի Պաշտօնակատար Իշխան Մէլիքով:

Հետեւալ հնազանդական ժողովը 1884 թւին լինելու է Ողէստայում:

«Кавказ» լրագրից լսել է որ երէկ, 22-ին սեպտեմբերի կոմս Ուվարով իր ընտանիքով և պրոֆեսոր Վերիսով ճանապարհ են ընկել դէպի Կախէթ, որտեղ պէտք է հետադառնան մի քանի հասցիներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«JOURNAL d'ORIENT» ԼՐԱԳՐԻ 807-ՈՒՍԾԸ

Կ. Պօլսի «Տերիքէի Հաւաքի» թիւրք լրագրի նորերումս մի մասնութիւն է աւելի թիւրք կառավարութեանը Վիեննայի «Journal d'Orient» լրագրի մասին, տեղով որ այդ լրագրի մէջ հրատարակված յօդուածները հայոց խնդրի մասին կարող են փնտել օսմանեան պետութեան շահերին:

Ահա ինչ է պատասխանում Փրանսիական լրագրից թիւրք մասնիչին:

Թիւրք լրագրին երեկ շատ է նեղացնում մեր արդար և ճշմարիտ խօսքը, բայց մենք նախազգուշացնում ենք շէյխ Իսապուլաճի ձեռքով վարձված թերթը թէ այն միջոցը որ նա խորհուրդ է տալիս Բ. Գրանը, ոչ չինչով էլ քիչ փնտել մեր լրագրի տարածմանը և մեր արժարժված արդարութեան և մարդասիրութեան սկզբունքներին: Մենք կիմանայինք այնպէս անել որ Թիւրքիայի մեր բաժանորդները կանոնաւորապէս ստանային մեր թերթը, չը նայելով այն բոլոր արգելքների, որոնք դրված լինէին մեզ դէմ թիւրք գէնդարայի կամայականութեամբ: Ամբողջ լուսաւորված աշխարհի դիպումատիական շրջանները, որոնք մեր թերթը կարգում են, և մամուլը որ մեր յօդուածները արտատպում է, կը շարունակէին մեր օրգանը ստանալ Կ. Պօլսում, ինչպէս ուրիշ տեղերում: Միջոցը, ուրեմն անգործական կը լինէր: Եթէ մեր չափաւորութեանը, մեր զգուշութեանը չը նայած, որով մենք միշտ խուսափել ենք կրկնել խիստ մեղադրանքներ Սուլթանի կառավարութեան դէմ, այդ կառավարութիւնը հետեւէր «Տերիքէի Հաւաքի» լրագրի խմբագրութեան թիւրք էֆէնդիների խորհրդներին և մեզ պատիւ անէր արգելել մեր լրագրին օսմանեան երկրի վրա մուտքը, մենք այլ ևս չէինք քաշվի բարձրաձայն ասել այն ամենը որ գիտենք: Եւ դա կը լինէր արգելման միակ հետեւանքը, որովհետեւ մինչև այժմ մենք մեզ զսպում էինք, յարգելով միմիայն հիւրասիրութեան կանոնները, քանի որ մեր թերթը ազատ շրջում էր Թիւրքիայում:

Ոչինչ ոյժ, շարունակում է Վիեննայի լրագրից, չի ստիպի մեզ դաւաճանել ճշմարտութեան պաշտպանութեան գործին և հրաժարվել յայտնելուց որ Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի գործադրութիւնը, մի պարտաւորութիւն է, որ դրված է թէ Բ. Գրան վրա և թէ յիշեալ դաշնագիրը ստորագրող պետութիւնների վրա: Մենք, ուրեմն, չենք լուրի և այդ կանոնը, ի հարկէ, թէ յօդու տնոյ իսկ օսմանեան կառավարութեան, թէ յօդու Հայաստանի քրիստոնեայ ազգաբնակչութեան շահերի,—մին-

չե որ ցանկացած և օրինաւոր կերպով գործադրված ընթացիկ չիրագործվեն այդ երկրորդ Բոլշոյի մէջ:

Մենք երբեք չենք դրդել հայերին թիւրքաց կառավարութեան դէմ, ստուգել է թուրքական զօրքան, բայց միշտ խորհուրդ ենք տուել նրանց համբերութիւն և միեւնոյն ժամանակ օրինական միջոցներով գործ դնելը, իրանց գոյութեան համար իրաւունքը ստանալու նպատակով: Մենք հասկանում ենք որ այդ տեսակ լեզու վախճանում է հին թիւրքերին, որովհետեւ մենք հայոց դատը պաշտպանում ենք և դժուարեցնում վրէժի, առանց յափշտակութեան և կրքի, բայց և առանց թուլութեան և կոմպրոմիսների:

Վերջնային թերթը աւելացնում է: Ամբողջ Եւրոպայից մենք ստանում ենք համակարան ցոյցեր մեր յանձն առած առաքելութեան համար: Բայց մահմետական քրիստոնէական թող մեզ ներքին վերաբերել իրան այն խօսքը, որ ասել է նրա նման արարածներին մասին մի մեծ միւստոր. այդ տեսակներին չեն պիտի ձեռնդրուի ծածկած ձեռքերով, բայց նրանց պէտքերի կրկին թքում են արհամարհանքով: Ինչ և իցէ «Ջէրիդէի» չափազանց լրագրի մատնութիւնը մի մեծ պատիւ է բերում «Ժողովրդական» լրագրին, որովհետեւ տպագրւածում է մեզ թէ ընթացիկ թիւսմիւսերը թիւրքախոս վերջին ծայր յուսահատութեան են հասել և թէ լուսաւորված Եւրոպան արձագանք է տալիս մեր ձայնին: Ի վերջոյ մենք չենք հաւատում արգելմանը, բայց մենք պարտաւորութիւն համարեցինք մերկացնել քրեւորի և նրանց ագէստների մատնութիւնները:

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Բիսմարկի պաշտօնական լրագիրը յայտնում է, որ նրան յայտնի էր, թէ կայսրերի տեսութիւնը պէտք է Գանցիգի մէջ կատարվէր, բայց նա առիթ ունէր մինչև վերջին րոպէն պնդելու, որ տեսութիւնը կը կայանայ Շտետտին կամ Կէսնիգսբերգի մէջ: Գանցիգի մէջ հրատարակվող լրագիրները լուրը կայսրերի տեսութեան մասին առանց հերքման թողնելը կը նշանակէր Գանցիգը Եւրոպական դաւադրների և մարդասպանների կենտրոնատեղի դարձնել: Այդ պիտի պատասխանատուութիւնը ոչ ոք չէ կարող իր վրա առնել: Այդ բանը դժուար չէր հասկանալ նորերում կատարված վրէժալի անցքերից յետոյ:

Վերջին տեղեկութիւնների համեմատ գերմանական կառավարութեան յարաբերութիւնները կաթոլիկ եկեղեցու հետ լուսաւորում են: Գերմանական գեսպանը Վատիկանին մէջ, Շլեսսեր, որին յանձնված են բանակցութիւնները գերմանական և պապական կառավարութիւնների մէջ, արդէն տեսնվել է մի անգամ պապի հետ և երեք անգամ կարգիւնալ Նախագահին հետ: Բացի դրանցից ուրիշ ոչ ոք չէ մասնակցում այդ բանակցութիւններին: Բերլինից հաղորդում են, թէ այնտեղ պաշտօնապէս հերքվում է այն լուրը, իբր թէ Իշխան Բիսմարկ բարեկրօնի է իտալական կառավարութեան առաջ յօգուտ պապի: Այդ հաղորդութեան մէջ աւելացրած է, որ իտալական կառավարութեան բռնած ընթացքը վերջին ժամանակներում կատարելապէս ինքնուրոյն բնաւորութիւն ունի և որ նրան արտաքուստ ոչինչ չէ ներշնչված:

Գերմանական լրագրատարի անգամ Բիւ-

րի, որ շատ անգամ առաջարկել է ընդհանուր զինաթափութիւն, նորերում բռնութիւնի ձեռքով մի բաց նամակ գրեց Գաւթետային «Պատերազմ թէ խաղաղութիւն» վերնագրով: Բրոշիւրի հեղինակը չէ հաւատում, որ յաւիտենական խաղաղութիւնը շուտով իրագործվի: Այնու ամենայնիւ, նրա կատու է Բիւր, Եւրոպայի մէջ տարածված պետական փառասէր ձգտումների հիւսնակութիւնը, անընդհատ զինաւորութիւնը և պատերազմական սպառնալիքները արագ և վճռողական բժշկութեան կարօտ են: Բժշկվելու համար ամենալաւ միջոցը զինաթափութիւնն է: Գրա համար բաւական է մի քայլ անել, բաւական է, որ Եւրոպական պետութիւնները մի համաձայնութիւն կաշարեն յօգուտ խաղաղութեան: Բրոշիւրի հեղինակը Գաւթետային արած իր առաջարկութիւնները ձեռնարկում է հետեւեալ կերպով. «պէտք է մերժել անգործական իդէալը աշխարհը վերանորոգելու մասին և միակողմանի զինաթափութիւնը կամ պաշտպանողական ոյժերի թուլացնելը և ձգտել պետութիւնների փոխադարձ ազատ համաձայնութեանը գործերի թիւ միաժամանակ և միակերպ քաջանելու վերաբերութեամբ մի որոշ ժամանակամիջոցի ընթացքում, օրինակ 10—15 տարի, և միջնորդ դատարան հիմնելու մասին, որ վճռէր այդ ժամանակամիջոցի ընթացքում բարձրացած միջադրային վեճերը»: Վերջը Բրոշիւրի հեղինակը ջերմ հրաւեր է կարդում Գաւթետային և Ֆրանսիացիներին ընդունել այդ խաղաղամիտական առաջարկութիւնը, որ մի ժողովուրդ միւսին է անում: Բացի այդ նա համոզում է Ֆրանսիացիներին չը հաւատալ այն կարծիքին, իբր թէ ներքին անհամաձայնութիւնները ֆլուսում են Գերմանիայի ոյժին և միութեանը և իբր թէ գործերի համար առած ծախսերը նրան նիւթակաշակէն անանկացնում են: «Արտաքին թըշնամին, աւելացնում է Բիւր, գերմանացիներին միշտ միացած կը գտնի, իսկ նիւթակաշակը միշտ առատ կը լինի գերմանացիների հայրենասիրութեան և անձնագոհութեան շնորհիւ»:

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինգտոնի մէջ ստացված լուրը նախագահ Գարֆիլդի վատ և անյուստի դրութեան մասին մեծ վրդովմունք է ընդհանուր տիրութիւն պատճառեց: Ամբողջ գիւշերը ժողովուրդը չէր հեռանում փողոցներից: Ամենքը պախարակում էին բժիշկներին: Հասարակութիւնը ցաւակցութիւն էր յայտնում, որ նախագահի մօտ չը հրաւիրվեցան Միացեալ Նահանգների բոլոր երեսների բժիշկները: Բոլոր լրագիրները պնդում էին, որ ամենալաւ բժիշկները հեռացրած էին նախագահից բժիշկ Բլիսի փառասիրութեան պատճառով, որ կարողացաւ մինչև անգամ նախագահի տնային բժիշկին հեռացնել: Բլիս այնքան վատ էր վարվում հրաւիրված բժիշկների հետ, որ նրանք հեռանում էին և չէին մասնակցում նախագահի բժշկութեանը: Գարֆիլդին դեղ տուր բժիշկներից երեքը ոչ մի վէրք չէին տուր, և Անիւ և Համիլտոն բժիշկները հրաւիրվեցան Գարֆիլդի մօտ վերք ստանալուց մի ամիս յետոյ, երբ արդէն ուշ էր և սրկալը անխելի էր ուղղել: Բժիշկներից մի քանիսը հաւատացնում էին, որ պէտք էր հանել գնդակը, որպէս զի նախագահի աւրելը չը վարակվէր: Այդ բանն էլ Բլիս

Թոյլ չը տուեց: Նախագահի հիւանդութեան բոլոր ժամանակ տիկին Գարֆիլդ իր հաստատամտութեամբ և սիրով դէպի իր ամուսինը արժանացաւ ամենքի յարգանքին: Նա գիշեր ցերեկ իր ամուսնի անկողնի մօտ էր գտնվում և արտաքուստ հանգիստ էր ձեռնում, որ չափազանց հանգստացնող տպաւորութիւն էր գործում հիւանդի վրա: Սպիտակ տան մէջ մի առանձին վառարան էր կազմված, որի մէջ նա անձամբ պատառնում էր հիւանդի համար կերակուր:

Սկստանալիս 6-ից արդէն նկատվում էր, որ Գարֆիլդի դրութիւնը վատանում է: Ամառը նմանող հիւանդը չէր կարողանում ընդգրկմանալ հիւանդութեան ազդեցութեանը և կորցնում էր ուշքը: Բժիշկները դեռ ևս յոյս էին տալիս տիկին Գարֆիլդին, չը նայելով, որ հիւանդի արիւնը վարակված էր: Գարֆիլդի մոտաւոր ընդունակութիւնները բնական էին, երբ նա առաջ ուշաթափվեցաւ և յետոյ քնեց: Գարֆիլդ վախճանվեցաւ հէնց այն րոպէին, երբ բժիշկները կարծում էին, թէ նա լուսանում է: Նախագահի դիակը կատարեալ կմախք է:

ԻՏԱԼԻԱ

Մենտի Գարիբալդի միւստորութեան մի պաշտօնական խնդրեց ներկայացրեց կամաւոր գործերի մի բաժին հիմնելու համար, որ «Երգուչ» ընկերութիւնը կամենում է կազմակերպել: Միւստորութիւնը պատասխանեց, թէ նա հաւանում է այդ ընկերութեան ազգասիրական նպատակները, բայց խնդրված թոյլութիւնը չէ կարող տալ, որովհետեւ մի կողմից օրէնքը թոյլ չէ տալիս կառավարութեան անկախ զորաբաժիններին գոյութիւնը, միւս կողմից պատերազմական կրթութիւնը ցանկացողներին ընդարձակորէն անպարէզ է արվում:

Սուրբ Պետրոսի մայր եկեղեցու պաշտօնաւոր հոգեւորական կոմս Կամպելօ մի նամակ գրեց կարդենալ Բարբոսօին, որով յայտնում է, թէ նա, նկատելով, որ այժմեան պապը իր նախորդի նման ոչինչ միջոց չէ գործ դնում իտալիայի հետ հաշտվելու համար, հարկաւոր է համարում բողոքականութիւն ընդունել: Այդ անցքը Հռոմի մէջ մեծ տպաւորութիւն գործեց:

Վենետիկում ժողովված աշխարհադրական կոնգրեսի երկրորդ նիստի ժամանակ Լեսսեպս հաղորդեց, որ իտալական Հռոմ բերտ թագաւորը նրան յայտնել է, թէ Ֆրանսիայի և իտալիայի մէջ առեւտրական մի նոր դաշնագրութիւն է կապված: Լեսսեպս պատմեց Պանտի ջրանցքը անցկացնելու մանրամասները:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 24 սեպտ.

Այստեղ ընտրողական շարժումը ճշմարիտ այնքան սաստկանում է, որ անկարելի է նրան անտես առնել: Կառավարութիւնը, ի հարկէ, իր կողմ ձգելու համար ընտրողներին, վճռեց հարկեր չը վերցնել վերջին ատոմաների հարկատուներից ներկայ եռամսեակի համար և այս արտօնութիւնը վայելողների թւում գտնվեցան անապատելի կերպով Staats-Einkommen-Steuer (եկամուտի պետական հարկ) վճարողներն էլ: Այսպիսով կառավարութիւնը կարծում էր իր կողմը ձգել բոլոր պաշտօնականներին և ստանալ կողմ իտալացիների մէջ մի մեծամասնութիւն Բիսմարկի քաղաքականութեան համար:

Բայց այժմ արդէն շատերը կասկածում են, որ այդ միջոցները, ինչպէս աղքատների ապահովութիւնը և հիւանդների ու աշխատանքին անկարողներին հովանաւորելը կառավարութեան կողմից, կարող կը լինեն յաջողվել: Բազմութիւնը, որ Բիսմարկ կարողացել է հաւաքել իր համար, այնքան բաղմունակ է, որ հաւան թէ ամեն բանում նրա հետ միասին կընթանայ: Ինչպէս կարելի է երեկայեւ, որ կղերականները, որոնց այնքան վրէժներ արեցին, այժմ պահպանողականների, հակառակմիտների և աշխատաւորների հետ միասին երթան: Իսկ այս դաշինքը յետագիւտ կուսակցութիւնների կողմից ստիպեց և ազատականներին միանալ և մի երեւոյթ, որ երբեք այնքան պարզ նկատված չէր, այժմ կատարվում է: Նացիօնալ-լիբերալները և նրանցից անջատված աւելի առաջադէմ մասը, որ իրան հաղաւթաւ կուսակցութիւն է անուանում, իսկ սովորաբար չանցնողներն առնու է կրում, Բերլինի գրեթէ ամեն ընտրողական բաժիններում (Wahlkreis) որոնց իր սեփական կանդիդատ չառաջարկել, այլ իր ձայները տալ առաջադէմ «Fortschritt» կուսակցութեան կանդիդատին: Որ Բերլին նոյնպէս առաջադիմական կը մնայ, ինչպէս և մինչև այժմ էր, հաղիւ թէ կարելի է կասկածել և երկի Շտեպկերները, չէնդիցնելու և tutti quanti, ձայների անաղին բազմութեամբ կը գործեն, փոխանակ ընտրված լինելու, ինչպէս նրանք, ի հարկէ, հաւատացնում են:

Կառավարութիւնը այնպիսի ընթացք է բռնել, որ այնպիսի կողմերից ընդգրկողութիւն կը ստանայ, որտեղից երբեք չէր սպասում և կղերականները, ճէնց որ նոր ոչ թէ կառնեն, անկասկած կառավարութեան դէմ կողդեն իրանց գործունէութիւնը և կաշխատանքի վրէժ առնել առաջվայ Kulturkampfի համար, որ նրանց հասցրել էր արդէն գրեթէ դէպի կատարեալ անկում: Միւս կողմից Arbeiterpartei (բանւորների կուսակցութիւնը) անկասկած կը տեսնի, որ կառավարութեան «բարեբարութիւնները» միայն արտաքուստ այնպէս էին երեւում և իսկապէս ոչինչ ոչ չեն բարեբար: աշխատողների դրութիւնը, իսկ գուցէ կատարեալապէս կը սթափվեն, ինչպէս արդէն այժմ էլ սկսում են յայտնել ժողովներում: Նշանաւոր է այն երեւոյթը, որ մինչեւ կառավարութիւնը իր կողմն է ուղղում գրաւել աշխատաւոր դասը, նա, այնու ամենայնիւ նոյն սաստկութեամբ հալածում է սոցիալ-դեմոկրատներին, իսկ ինքն աշխատում է ապացուցանել որ ինքն էլ ձգտում է դէպի աշխատանքի ազատութիւնը կապիտալի բռնութիւնից: Սոցիալ-դեմոկրատները շարունակ հալածվում են, չառ քաղաքներ արդէն վերք պաշարմանը դրութեան մէջ են գտնվում և այս կուսակցութիւնից շատերը, որոնք ամենաողորմելի և աղքատ դասակարգին են պատկանում, գաղթում են դէպի Ամերիկա, ուր անցեալ ամիս հասան Գերմանիայից մօտ 56,000 գաղթականներ,--մի չեղած թիւ, քանի որ կայ գաղթականութիւնը դէպի Ամերիկա:

Անդրեան Արծուրեան

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԳ, 21 սեպտեմբերի Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ռ. 78 կ., երկրորդ 93 ռ. 87 կ., երրորդ 94 ռ. 12 կ., չորրորդ 93 ռ. 62 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 226 ռ. 25 կ., երկրորդ 220 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 25 կ., երկրորդ 91 ռ. 25 կ., երրորդ 91 ռ. 25 կ., օսկի 7 ռ. 65 կ.: Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,94 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 25 սանտիմ:

Իմբագիր--հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

